ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 5

# 26.12.2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-10» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան «26» 01 2026թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ 1»), մի կողմից, և «ՍՈՆՁԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Աֆինյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 26.12.2025թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-10» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.1.1-րդ, 8.5-րդ, 8.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Սույն համաձայնագրով նախատեսված «Գնորդ 1»-ի իրավունքներն ու պարտականությունները գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Զանգակ» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «Գնորդ 2»):

1.2 Հաստատել գնման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 1-ը կցվում է):

1.3 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (վճարման ժամանակացույց)՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 2-ը կցվում է):

1.4 Ապրանքը համաձայնագրով սահմանված ժամկետում «Վաճառող»-ի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.5 «Վաճառող»-ի կողմից համաձայնագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել «Գնորդ 2»-ի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.6 Համաձայնագրի գինը կազմում է 1973525.7 (մեկ միլիոն ինը հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր քսանհինգ դրամ յոթանասուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

Համաձայնագրի գինը ներառում է համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով «Վաճառող»-ի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և «Վաճառող»-ն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ «Գնորդ 2»-ը նվազեցնելու այդ գինը:

1.7 «Գնորդ 2»-ն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները «Վաճառող»-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

1.8 Մատակարարված ապրանքն ընդունվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև համաձայնագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ «Վաճառող»-ը «Գնորդ 2»-ին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված 3):

1.9 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է համաձայնագրի պայմաններին: Հակառակ դեպքում համաձայնագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և «Գնորդ 2»-ը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար համաձայնագրով նախատեսված միջոցները.

բ) «Վաճառող»-ի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

1.10 «Գնորդ 2»-ը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում «Վաճառող»-ին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

1.11 Եթե համաձայնագրի 1.10 կետով սահմանված ժամկետում «Գնորդ 2»-ը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և համաձայնագրի 1.10 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը «Գնորդ 2»-ը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են 7 (յոթ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**«ԳՆՈՐԴ 1»**
**Չարենցավանի**
**համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան**
**հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132111023**
**ՀՎՀՀ 03022197**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**«ԳՆՈՐԴ 2»**
**ՀՀ Կոտայքի մարզի**
**Չարենցավան համայնքի**
**Չարենցավան քաղաքի**
**«Զանգակ» մսուր**
**մանկապարտեզ ՀՈԱԿ**
**ք. Չարենցավան Քոչարի**
**փողոց թիվ 15**
**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 16028003757500**
**ՀՎՀՀ 02805574**

**Տնօրեն՝ Ա. Միրզոյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**«ՎԱՃԱՌՈՂ»**
**«ՍՈՆՋԻ» ՍՊԸ**
**ք. Հրազդան, Կենտրոն 37/93**
**«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 163158085866**
**ՀՎՀՀ 03033793**
**էլ. հասցեն**
**baghdasaryan_1978@mail.ru**
**հեռ. (+37493) 98-98-09**

**Տնօրեն՝ Ա. Ափինյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 1
26.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-10» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 5 համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 15811100/502 | Հաց, բարձր տեսակի | կգ | 300 | 750000 | 2500 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 2500 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 7 | 15311100/504 | Կարտոֆիլ, ուշահաս | կգ | 178.8 | 178800 | 1000 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 1000 | 2026 թվականի հունվար-ապրիլ, սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներ |
| 31 | 03222128/502 | Խնձոր, ուշահաս | կգ | 165.09 | 57781.5 | 350 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 350 | 2026 թվականի հունվար-ապրիլ, սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներ |
| 47 | 15332250/501 | Մրգադոնդող (կիսել) | կգ | 1399.98 | 41999.4 | 30 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 30 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 48 | 15842310/501 | Կոնֆետ կարամել | կգ | 1200 | 48000 | 40 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 40 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 51 | 15831000/501 | Շաքարավազ սպիտակ | կգ | 379.99 | 113997 | 300 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 300 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 52 | 15831710/501 | Հալվա | կգ | 1000 | 100000 | 100 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 100 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 57 | 15821500/503 | Պրյանիկ | կգ | 649.98 | 64998 | 100 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ | 100 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | 15 | | ամիսներ |
| 62 | 15112150/501 | Հավի կրծքամիս, պաղեցված | կգ | 2205.11 | 220511 | 100 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 100 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 67 | 15541100/501 | Պանիր, լոռի | կգ | 1799.99 | 215998.8 | 120 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 120 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 68 | 15541200/501 | Պանիր, չանախ | կգ | 1746 | 69840 | 40 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 40 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 72 | [illegible]/501 | Եգիպտացորենի ձեթ, ռաֆինացված (զտած) | լիտր | 1200 | 72000 | 60 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 60 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 93 | 15613350/501 | Վարսակաձավարի փաթիլներ (հերկուլես) | կգ | 396 | 39600 | 100 | ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15 | 100 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1» 

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Զանգակ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ
ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16028003757500
ՀՎՀՀ 02805574

Տնօրեն՝ Ա. Միրզոյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ՍՈՆՋԻ» ՍՊԸ
ք. Հրազդան, Կենտրոն 37/93
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163158085866
ՀՎՀՀ 03033793
էլ. հասցեն
baghdasaryan_1978@mail.ru
հեռ. (+37493) 98-98-09

Տնօրեն՝ Ա. Ափինյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 2
26.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-10» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 5 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | | Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 15811100/502 | Հաց, բարձր տեսակի | 750000 | 750000 | 750000 | 750000 | 750000 | 750000 | 750000 | 750000 | 750000 | 750000 | 750000 | 750000 | 750000 |
| 7 | 15311100/504 | Կարտոֆիլ, ուշահաս | 178800 | 178800 | 178800 | 178800 | 178800 | 178800 | 178800 | 178800 | 178800 | 178800 | 178800 | 178800 | 178800 |
| 31 | 03222128/502 | Խնձոր, ուշահաս | 57781.5 | 57781.5 | 57781.5 | 57781.5 | 57781.5 | 57781.5 | 57781.5 | 57781.5 | 57781.5 | 57781.5 | 57781.5 | 57781.5 | 57781.5 |
| 47 | 15332250/501 | Մրգադոնդող (կիսել) | 41999.4 | 41999.4 | 41999.4 | 41999.4 | 41999.4 | 41999.4 | 41999.4 | 41999.4 | 41999.4 | 41999.4 | 41999.4 | 41999.4 | 41999.4 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 48 | 15842310/501 | Կոնֆետ կարամել | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 |
| 51 | 15831000/501 | Շաքարավազ սպիտակ | 113997 | 113997 | 113997 | 113997 | 113997 | 113997 | 113997 | 113997 | 113997 | 113997 | 113997 | 113997 |
| 52 | 15831710/501 | Հալվա | 100000 | 100000 | 100000 | 100000 | 100000 | 100000 | 100000 | 100000 | 100000 | 100000 | 100000 | 100000 |
| 57 | 15821500/503 | Պրյանիկ | 64998 | 64998 | 64998 | 64998 | 64998 | 64998 | 64998 | 64998 | 64998 | 64998 | 64998 | 64998 |
| 62 | 15112150/501 | Հավի կրծքամիս, պաղեցված | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 |
| 67 | 15541100/501 | Պանիր, լոռի | 215998.8 | 215998.8 | 215998.8 | 215998.8 | 215998.8 | 215998.8 | 215998.8 | 215998.8 | 215998.8 | 215998.8 | 215998.8 | 215998.8 |
| 68 | 15541200/501 | Պանիր, չանախ | 69840 | 69840 | 69840 | 69840 | 69840 | 69840 | 69840 | 69840 | 69840 | 69840 | 69840 | 69840 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 72 | 15421200/501 | Եգիպտացորենի ձեթ, ռաֆինացված (զտած) | 72000 | 72000 | 72000 | 72000 | 72000 | 72000 | 72000 | 72000 | 72000 | 72000 | 72000 | 72000 | 72000 |
| 93 | 15613250/501 | Վարսակաձավարի փաթիլներ ([illegible]) | 39600 | 39600 | 39600 | 39600 | 39600 | 39600 | 39600 | 39600 | 39600 | 39600 | 39600 | 39600 | 39600 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված խմբաքանակների:

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Զանգակ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ
ք. Չարենցավան Քոչարի փողոց թիվ 15
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16028003757500
ՀՎՀՀ 02805574

Տնօրեն՝ Ա. Միրզոյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ՍՈՆՁԻ» ՍՊԸ
ք. Հրազդան, Կենտրոն 37/93
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163158085866
ՀՎՀՀ 03033793
էլ. հասցեն
baghdasaryan_1978@mail.ru
հեռ. (+37493) 98-98-09

Տնօրեն՝ Ա. Ափինյան

(ստորագրությունը)
Կ.Տ